

ԱՆՑԵԱԼԻ ՅՈՒԾԵՐ



Երկաթուղու խիստ ցնցումից Մուշեղն աչքերը բացեց և դեռ քնաթաթախ սկսեց մտաբերել իւր քաղցր երազը: Քիչ առաջ նա դտնւում էր իւր դեղեցիկ, կանաչազարդ, բուրավէտ հայրենիքում, շրջապատուած սիրասուն զաւակներով. նոցա սիրունիկ աչիկները պսպղում էին մանկական անմեղ քնքշանքով և այ վարդի նման շրթունքները թօթօվում էին՝ «հայրիկ, հայրիկ շան» խօսքերը:

Այդ չիշելիս նա խորը ան քաշեց, աչքերը տրորեց, սկսեց նայել շուրջը և լանկարծ, այդ վայրկեանին միայն նկատեց աղօտ լուսով լուսաւորուած կուպէում իւր դիմացը նստած մի թուրքի: Նա կարծես ցնցուեց, վրէժխնդրութեան կրակով վառուեցան նորա սևորակ, խելօք աչքերը. ձեռքը մեքենաբար տարաւ զրպանը և մի դառնութիւն, թախիժ պատեց նորա դէմքին... Վաղուց չէր, որ սիրելի հայրենիքն արեան ծով էր դարձել, վաղուց չէր, որ իւր մերձաւորներից քանիսը զոհ էին գնացել անմիտ, եղբայրասպան կոտորածին. այո, վաղուց չէր վերջապէս, որ հայ շէն տներն ու օջախները հրի ճարակ էին դառել, սւերուել ու կործանուել հարևան թուրքերի ձեռքով. և այժմ նորանից մէկն արիւնարբու երեսով նստած է իր հանդէպ... Մուշեղը նայեց վեր, վար, որ տեսնի թէ տեղն են արդեօք իւր իրեղէնները, զլխաւորապէս այն արկղը, որ այնքան խնամքով, հոգատարութեամբ, իր ձեռքով բերել, պարտակել էր այլտեղ. այո, այդ արկղի համար է; որ նա տուն, տեղ, ծերունի ծնողներ, ազգական ու ընտանիք բաղդի բերմունքին թողած, գնացել էր հեռձ, ամիսներ շարունակ դեղերել էր չարաշութեամբ վէնք գնելու համար:

Ձէ, տեղն էր ամեն ինչ. բայց Մուշեղի սիրտը կասկած ընկաւ. չլինի՞ թէ թուրքը հետևում է իրան. չլինի՞ թէ նա արկղի հոտն առել է... և մասնելու է... չլինի՞ այս, կամ այն... և քանի զնուծ, անհանդատանում էր ու մի ըօպէ դադար չէր կարողանում նստել. այն ինչ հարեանն աչքերը շարունակ մի կէտի յառած, նստած էր ինչպէս մի արծան:

Երկաթուղին քանի զնուծ արագացնում էր քայլը. այդ ժամանակ Մուշեղի հարեանը շարժուեց իրան ցեղին յատուկ դանդաղկոտութեամբ, մի զննողական հայեացք զցեց նորա վերայ ու դուրս զնաց բեռնաւորուած իւր խուրչինով: Մուշեղը դէպքից օգտուելով, հանեց զբպանից ատրճանակը ու ուղեց բաց պատուհանի մօտ ստուղել, թէ արդեօք լի՞քն է. և դեռ նոր էր քաշում զսպանակը, երբ զնացքը կանգ առաւ մեծ թափով ու Մուշեղը կորցնելով հաւասարակշռութիւնը, լեռ մղուեց, պատուհանից և վայր ընկաւ. ատրճանակն ինքն իրան բացուեց: Յիրաւի, այդ ժամանակ մի ինչ որ ծայն, մի պայթիւն լսուեց, բայց այդ կարելի էր վերադրել երկաթուղու սուր ճիչերին ու զղրղոցին, որը շնչասպառ մարդու նման իսկոյն կանգ առաւ կայարանի առաջ:

Մուշեղը ըօպէտաչափ, սրտատրոփ, մէկ դիրքի մէջ պառկած, սպասում էր թէ արդեօք ի՞նչ էլք կունենայ իւր այդ արկածը. իսկ երբ հաստիացաւ թէ իրան հետևող չկայ, շարժուեց, բայց մի անտանելի ցաւ զգաց թեւի մէջ, որի վերայ վայր ընկնելիս լենուել էր ամբողջ մարմնով. բարեբաղդաբար նորա տեղը կայարանի հակառակ կողմն էր, այնպէս որ անտեսանելի էր անցորդների աչքից, մանաւանդ որ մութ գիշեր էր, մի աստղ անգամ չէր երևում երկնքի երեսին: Նա մի կերպ ոտքի կանգնեց, զգուշութեամբ փաթաթեց ցաւած թեւը և ծուխ, մուխն անցնելուն պէս, կարծես քիչ-քիչ հանգստանում էր ու ուրախանում որ փորձանքից ազատուեց, երբ օ՛, յուսահատութիւն, յանկարծ նա նշմարեց յուսամուտի կողքին ատրճանակի զնդակով ծակուած մի տեղ, որ տանում էր դէպի հարեան կուպէն: Յուզմունքով նա վեր բարձրացրեց դօշակը, զննեց և սառած մնաց. էլ կասկած չկտոր, որ զնդակն ուղղակի

հասել էր միւս կուպէն և անշուշտ դիպել այնտեղ գտնուող տիկնոջն ու փոքրիկ երեխային:

Մուշեղը մոռացաւ թե՛ ի պատճառաւ զի սպասուած ցաւը, այժմ նորա կոկորդն էր սեղմուում, զըռւխն էր այրուում և յուսահատութեան մէջ, շունչը բռնած, դառել էր մարմնացած լսողութիւն. ուղոււմ էր իմանալ, լսել զոնէ մի մարդկային շշուկ, բայց այն կուպէից ոչ մի ծայն, ծպտուն չէր լսուում: Մուշեղը մաղերը փետուում էր, կսկիծը կտրտուում էր նորա ազնիւ, զգայուն սիրտը՝ ճիճնչպէս, իմ անզգուշութիւնից մեռան մի նորատի տիկին ու մի փոքրիկ մանուկ, թերևս այդ ըօպէին մօր կենսատու ստինքին փարուած. Աստուած իմ, այս ի՞նչ պատուհաս էր, ես զրկեցի նոցա ծաղիկ հասակից, ես իմ մի զնդակով օպանեցի երկու անմեղ արարածներ. բայց ինչո՞ւ, ինչո՞ւ այս ամենը...»: Եւ նա խելագարի նման խփում էր իւր կրծքին, նորից մօտենում էր պատին, նորից ականչ զնուում, բայց աւանդ, ոչ մի թոյլ շշուկ այն կողմից... քանի զնուում, աւելի ևս լարուում էր նորա երևակայութիւնը. նա կարծես տաք արեան հոտ էր առնում, կարծես իր ոտքերը թաղուած էին զօհերի լճացած արեան մէջ. նա աչքերը լայն բացած, վեր էր թռչում, կանգնում բազմօրի վերայ, որպէս զի ազատէր խրուած ոտքերն այդ լճակից... Այդ միջոցին կարծես նորա ուղեղը քարացել էր, չէր կարողանում ոչ մի ելք գտնել այդ զըռւթիւնից դուրս գալու և միայն նորից ու կրկին անդամ մօտենում էր հարևանի պատին ու ինքն իրան մըմնչում. «անիծուած երեխայ, երէկ ամբողջ գիշեր քս լացով ինձ չէիր թողնում քնել, իսկ այսօր քո լուութիւնն ինձ անտանելի է. աղաչում եմ, լաց, ճչա, օրօր ու նանիկ պահանջիր, աղաղակիր որչափ սիրտդ կուզէ, միայն թէ զիտենամ, որ դու կենդանի ես...» Բայց զճճը, դարձեալ մեռելային լուութիւն և այս անգամ արդէն բոլորը, ամբողջ զնացքը կարծես խօտք էին կապել խոր քնի մէջ ընկըղմուելու և միայն լսելի էր շոգեկառքի միակերպ հեռոց մութ, մառախլապատ կէս գիշերին:

Եւ Մուշեղը, որ իւր հայրենիքում եղբայրասպան կոտորածի օրերին շարունակ անծնագոհ կերպով միւս կտրիճների

հետ միասին մահն աչքի առաջ կուռում էր, այնքան չէր մորմոքել ու տառապել, որքան այս մէկ գիշերուան մէջ:

Վերջապէս արշալոյսի ծիրանեզոյն շողքերը հեռուից սփռուեցան հորիզոնի վերայ. այդ բարերար լոյսի հետ միասին Մուշեղի խառնաշփոթ մտքերն էլ կարծես պարզուում էին, կարծես նորա գիտակցութիւնը սկսում էր դործել. նա այլևս դիշերուան խելակորոյսը չէր. նա մխիթարում էր ինքն իրան. դուցէ թէ չեն ֆնասուած, դուցէ զնդակը դէմ է առել պատին ու ֆնացել: Այդ յուսատու մտածմունքների միջոցին երեւաց կոնդուկտորը, և Մուշեղի մտքով կայծակի արագութեամբ մի բան անցաւ... ու կանգնեցնելով նորան՝ սասաց. «խնդրեմ իմ հարեան կուպէն բացէք. և տիկնոջից խնդրեցէք օղբկօջն. ասացէք դուխս սաստիկ ցաւում է, դուցէ բարի լինի սայ»:

Կոնդուկտորը դուռը դեռ նոր էր բաց անում, երբ ներսից երեխայի ձայնը լսուեց. Մուշեղը քիչ ֆնաց դրկէր, համբուրէր կոնդուկտորին, բայց իրան զսպեց. նորից այլայլուեց. իսկ տիկնոջն... մի դուցէ... նա... Բայց ահա լսելի եղաւ և մի կանացի մեղմ ձայն ու կոնդուկտորն օղբկօջնի սրուակը ձեռքին ներս մտաւ Մուշեղի մօտ. սա ուրախութիւնից այնքան շփոթուած էր, որ հարցրեց. «ուրեմն կենդանի՞ են նոքա», կոնդուկտորը դարմացած նայում էր, երբ Մուշեղը զգալով իւր սխալը, իսկոյն վրայ բերեց. «ես ուղեցի ասել զարթե՞լ են նոքա»:

Հիմա արդէն բաւականաչափ հանդատացած էր մեր երիտասարդն իւր գիշերուայ վշտից ու մտատանջութիւնից. մի, անմոռանալի, զարհուրելի մի գիշեր էր այն... Այժմ ֆնում էր իմանալ, տեսնել թէ արդեօք զնդակի տեղը չի՞ երևում հարեւան կուպէում. չէ՞ որ, մտածում էր Մուշեղը, եթէ նկատուի, տիկինն անկասկած կը լայտնէ այդ մասին և ապա կըսկսուի քննութիւն, խուզարկութիւն, այդ դէպքում ես կորած եմ... Նա արդէն հոգեպէս չափազանց շատ էր տանջուել, և էլ չէր կարող դիմանալ նորանոր կասկածներին, մանաւանդ որ դեռ կէս օր էլ ճամբայ ունէր շարունակելու նոյն գնացքով և Մուշեղն էլ չհամբերեց, դուրս եկաւ իւր կուպէից, մօտեցաւ տիկ-

նոյ զբանն ու կամացուկ բաղխեց. «Թոյլ կրտաք, որ ներս մտնեմ և շնորհակալութեամբ վերադարձնեմ ձեր օղորդօնը»։ Սիրալիր տիկինը ներս հրաւիրեց, իսկոյն և եթ սկսուեց հետաքրքրական խօսակցութիւն, որի ժամանակ Մուշեղն անհանդիստ աչքերով որոնում էր չարաբաստիկ զնդակի տեղը. երեւան այդ միջոցին իւր լացն սկսեց. մայրը ստիպուած եղաւ Մուշեղից ներողութիւն խնդրել ու դուրս տարաւ փոքրիկին։ Մուշեղը մենակ մնալով արագ արագ զիսձգօրէն սկսեց նայել չորս կողմը, բայց բան չէր երևում, ապա յետ տարաւ դօշակը և տեսաւ որ զնդակն չիրաւի իւր կուպէի լուսամտի կողքը ծակելով անցել էր այդ կողմի պատի մէջ ու մնացել հաստ դօշակի տակ։

Երբ տիկինը ներս մտաւ, Մուշեղն էլ այն ցրուած, մոլորուած երիտասարդը չէր. կարծէք նա կերպարանափոխուել էր, կարծես մի ծանր բեռ ընկած էր նորա ուսից։

Մուշեղի ճանապարհորդութիւնն արդէն վերջանալով լրայ էր։

Ճեռուից երևաց Բագուն մշուշապատ ու կարծես դալկահար... այն կենդանի, շէն ու հարուստ քաղաքը, որը քիչ առաջ անսպառ աղբիւրն էր գործարանատէրերի և բանուոր դասակարգի համար, այժմ ստէպ կրկնուող կոտորածներից ու թալաններից յետոյ պատկերանում էր ճամբորդների աչքին որպէս մի խղճուկ աւերակ, մի սոսկումի վայր։

Քիչ յետոյ իրարանցումն սկսուեց, զնացքը կանգ առաւ Բագուի դեղնաւուն կայարանի առաջ. համշարիների թրաշած ծոծրակներ էր, որ երևում էին պլատֆօրմի վերայ։ Մուշեղն իւր ատրճանակներով ու փամփուշտներով լի արկղը զրկած, արագ սլացաւ այդ բազմութեան միջից դէպի ընկերները, որոնք սպասում էին այնտեղ։ Նա շտապով ասաց. «ես անմիջապէս մեկնելու եմ հայրենիք, ուր ինձ սպասում է մահամեծ հայրս. տղէք շան, առէք այս արկղը, լանձնէք ում հարկն է. ձեզ մատաղ, լորդորեցէք ամենքին, մեծին, թէ փոքրին, մեր դարաքաջ հայ ժողովրդին զինուել ու զինուել. միայն և միայն ինքնապաշտպանութեան մէջն է մեր փրկութիւնը»։